



Ա. ՏԱՐԵՑԵՎ

Մ Ե Տ Տ Լ Ի Ց Ա

ԹԱՐԳՄ. Հ. Տ. Ա. Վ. Ա. Գ Յ Ա Ն Ի
ՆԿԱՐՆԵՐԸ Բ. Դ Ե Կ Ս Ե Ր Ց Ե Վ Ի

891-710
\$ -14

ՀՐԱՏ 1936 ՅԵՐԵՎԱՆ

10 5 . 09. 2013

5667

891.715

§ - 14

2011 - 05

ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ, ՄԻՋԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Խոնավ կես գիշերին ոգոստոսի սկզբներին, Լեինսոնի ջոկատը յեկավ մի ձիավոր եստաֆետ։ Ուղարկել եր այն ծեր՝ Սուխովել-Կովտունը — պարտիզանական ջոկատների շտաբի պետը։ Ծեր Սուխովելը դրում եր, թե ինչ-պես ճապոնացիները հարձակվել ելին պարտիզանական գլխավոր ուժերի վրա։ Դրում եր նաև իզվեստկայի տակ տեղի ունեցած մահացու ճակատամարտի մասին, և այն մասին՝ վոր ինքը թագնվում ե վորսորդական ձմեռանոցում, և վիրավորված ե ինն գնդակներով...

Լեինսոնն ստացավ եստաֆետը գիշերվա ժամը 12 անց կես, իսկ կես ժամ հետո հովիվ Մետելիցայի ձիավոր դասակը ցրիվ յեկավ ճանապարհներով, տարածելով տագնապալի լուրը։

Ընկնելով խուլ վալրեր, Լեինսոնը գրեթե կորցրել եր կապը մլուս ջոկատների հետ։

Տալգալի կածաններով, վորտեղ վաղուց ի վեր աբ-



3506-82

գեն չեր լեզել մարդկալին վոտքը, տանում եր նա իր
պարտիզաններին:

Ամբողջ Ուլախինի հովիտը բռնված եր ճապոնացի-
ներով և կոչակալիններով: Հակառակորդի հետախուզնե-
րը պրապում ելին բոլոր ուղղություններով և հաճախա-
կի հանդիպել ելին Լեխսոնի դիտակալներին:

Առավոտը վաղ Լեխսոնին կարեցին լեռներից,
բայց լերկու ժամվա կովից հետո, կորցնելով մինչև լե-
ռեսուն մարդ, նա դուրս պրծավ հակառակորդ ջոկատնե-
րի միջից: Կոչակալինների հեծելազորը կրնկակոլս հե-
տապնդում եր նրան:

— Շարունակել մնալ այդ շրջանում՝ անմտություն
ե, — ասաց մթագնած Լեխսոնը՝ միակ ճանապարհը —
դեպի հրուսիս ե: — Նա արձակեց դաշտալին պայուսակը
և հանեց քարտեզը: — Այ... եստեղ կարելի յե անցնել
լեռնաշղթաներով... ձիշտ ե՝ հեռու յե, բայց ինչ արած...

Լեխսոնը վճռեց գիշերել տայգայում: Նա հուս ու-
ներ, շոշափելով ճամփան հետախուզների միջոցով, անց-
նել Տուդո-Վակիի հովիտը, վորը հարուստ եր ձիերով և
հացով:

— Մետելիցան կդնա հետախուզելու, կդիշերենք այս-
տեղ, — ասաց Լեխսոնն իր ոգնական Բակլանովին ու
կարգադրություն արեց:

— Կանգ առ, — բղավեցին առջեից: Կանչը հաղորդ-
վում եր շղթալով և, այն ժամանակ, լերը առջեսում ար-
դեն կանգ ելին առել, լետևում շարունակում ելին սեղմել:

— Մետելիցալին, Մետելիցալին են կանչում... — նո-
րից վագեց շղթալով...

Մի քանի վարկան հետո, բագեցի նման կորացած,
վրա հասավ Մետելիցան, և ամբողջ ջոկատն աչքերով հե-
տեվում եր նրա կառչուն, հովվական նստվածքին:

Ուղարկելով Մետելիցալին հետախուզման, Լեխսոնը
պատվիրեց նրան վերադառնալ հենց այս գիշեր: Մետե-
լիցան թողեց ջոկատը ժամը մոտ չորսին, կեսորից հե-



առ և խղճի մտոք քշում եր իր հովատակին։ Արդեն բոլոր ըովին մթնել եր, յերբ նա դուրս լեկավ տարգալից և կանգնեցրեց ձիուն հին ու փտած, կտուրը քանդված մեղվի ձմեռոցի մոտ։

Նա կապեց ձիուն և կառչելով շենքի վիրուն, ձեռքի տակ թափթփվող յեզրերին, բարձրացավ անկլունի վրա, ծակի մեջ թաղվելու վտանգի տակ։ Վեր ձգվելով կառչուն, կիսակորացած վոտքերի վրա, արդպես կանգնած եր նա մի տաս ըռպե, առանց շարժվելու, ականջնելով գիշերվանը և սուր հայացքով թափանցելով մթության մեջ։

Մետելիցան թոավ թամբի վրա և դուրս յեկավ ճանապարհը, վորի սև, վաղուց բարձիթողի արված ճանապարհը հազիվ յերևում եր խոտի մեջ։ Նոճիների բարակ բները հանդարտ սպիտակին ելին տալիո մթության մեջ, հանգցրած մոմերի նման։

Նա բարձրացավ բլրի վրա։ — Ճախից ձգվում եր ճահճաբլրակների սև շարքը, վոր կեռվել եր հսկալական գաղանի վողնաշարի նման։ Աղմկում եր գետը, Յերկու վերստի վրա յերկի հենց գետի մոտ, վառվում եր խարույկը։ Ավելի հեռուն, հատելով ճանապարհը, ձգվում ելին գլուղի գեղին անթարթ ճրագները։

Մետելիցան ցուրտ զգաց։ Նա հազին ուներ մի զինվորական չկոճկված ֆուֆալկա, վորի տակից յերևում եր պոկված կոճակներով և բաց ոձիքով մի զիմնաստյորկա։ Նա վճռեց գնալ սկզբից գեպի խարույկը։ Համենախն գեպըս հանեց պատրանից ատրճանակը և խրեց գոտու մեջ, ֆուֆալկալի տակից, իսկ պատրանը թագցրեց թամբի յետին կապած պատուսակի մեջ։

Նա արդեն բոլորովին մոտ եր խարույկին, — հանկարծ ձիու տագնապալից խրխնջոց լավեց խավարի մեջ։ Հովատակը առաջ նետվեց և, ցնցվելով հղոր մարմնով, խլշկտացնելով ականջները պատասխանեց խրխնջոցին։ Նույն ակնթարթում կրակի մոտ թափով ճռմվեց մի ըստ-



վեր։ Մետելիցան ուժգին խփեց մտրակով ու վեր նետովեց ձիու հետ միասին։

Խարուցկի մոտ վախեցած աչիկները չուած կանդնել եր մի նիհարիկ սևագլուխ տղա։ Նա մի ձեռքով բռնելեր մտրակը, մյուսն ել վերեւ եր բարձրացրել, կարծես ուզում եր պաշտպանվել։ Նա հագին ուներ պատառատված շարվար, իր հասակից ավելի յերկար պիջակ, վոր վիաթաթված եր մարմնի շուրջը ու գոտեռված կանեփաթելով։ Մետելիցան կատաղաբար կանդնեցրեց հովատակին տղալի ուղիղ քթի առաջ, և քիչ մնաց, վոր կոխ տար նրան։ Նա տեսավ իր առջեւ վախեցած աչքերը, կարձիկ շարվարը, վորի միջից աչքի ելին ընկնում մերկ ծնկները և տիրոջ ուսերից գցած խղճուկ պիջակը, վորի միջից այնպես մեղագոր ու խեղճ-խեղճ նայում եր նրա բարակ ու ծիծաղելի մանկական վիզը։

— Ել ինչ ես կանգնել։ Վախեցամբ։ Ախ, դու, ձնձը դուկ-ձնձուկ։ Այ քեզ հիմար տղա, — խոսեց Մետելիցան։ Կանգնել ե, ու պրծափ։ Բա, վոր կոխ տալի քեզ։

Տղան ահից հազիվ շունչ քաշեց։

— Բա ինչու դու վրա պրծար, վոնց վոր մի բուզով, — ասաց նա դեռ վախվիսելով։ — Վոնց չվախենաս ձիեր կան ինձ մոտ…

— Զիեր, — ծաղրաբար ձիդ տվեց Մետելիցան։ — Ասացեք, խնդրեմ։ — Նա թերը կանթեց կողքերին, յետընկավ, դիտելով տղային, և հանկարծ ծիծաղեց։

Տղան շփոթված, անվատահ վեր բաշեց քիթը, բացց, դլսի ընկնելով, վոր վոչ մի սարսափելի բան չկա, այլ ընդհակառակը, ամեն ինչ սաստիկ ծիծաղելի յե դառնում, կնճուտվեց այնպես, վոր նրա քիթը ցցվեց վեր, և նույնպես — իսկական յերեխայի նման — սկսեց ծիծաղել չարաձձի և բարակ ձայնով։ Դա Մետելիցայի համար անսպասելի յեր և նա փոթկաց ավելի բարձր, և նրանք յերկուսով քրքջում ելին այդպես մի քանի ըոսպե մեկը — որորվելով թամբի մեջ առաջ և յետ, իսկ մլուսը — ընկ-

նելով խոտի մեջ, ձեռքերով հենվել եր գետնին և ամեն անգամ նոր քրքիջի հետ յետ եր ընկնում ամբողջ մարմնով։

— Այ, թե ծիծաղեցրեց, հա, — ասաց վերջապես, Մետելիցան, ազատելով վոտքը ասպանդակից։ — Ինչ տարորինակն ես, իսկապես... — Նա թուավ գետին ու ձեռքերը պարզեց դեպի կրակը։

Տղան, դադարելով ծիծաղել, նայում եր նրան լուրջ կուրախ զարմանքով, կարծես թե սպասում եր նրանից դեռ ել ավելի անսպասելի տարորինակություններ։

— Ինչ ուրախն ես դու, դե՛, — խոսեց նա վերջապես։

— Յես, — ծիծաղեց Մետելիցան։ — Յես, ախակեր ջան, ուրախ մարդկամ...»

— Իսկ յես ենպես վախեցա, — խոստովանեց տղան։ — Զիեր կան եստեղ, ինձ մոտ։ Իսկ յես կարտոլ եմ խոստովում...»

— Կարտոլ։ — Այ ինչ եմ ասել։ — Մետելիցան նստեց նրա կողքին, ձեռքից բաց չթողնելով սանձը։ — Իսկ կարտոլը վրբութեղից ես ճարում։

— Բան ասաց, վրբութեղից ես ճարում... ենքան կա եստեղ... ծնկը։ — Յեվ տղան ձեռքով ցուց տվեց շուրջը։

— Գողաննում ես, ուրեմն։

— Գողաննում եմ։ Տուր յես պահեմ քո ձին... Լավ, ախակեր ջան, յես բաց չեմ թողնի, մի վախեցի։ Լավ հովատակի բարեկազմ, նիհար մարմինը և նրա ձիդ ու մկանեղ փորբը։ — Իսկ դու վրբուց ես ինքդ։

— Հովատակը, վասա չունի, — համաձայնվեց Մետելիցան։ — Իսկ դու վրբութեղից ես։

— Այ, հրեն, — դլսով արեց տղան դեպի կրակների կողմը։ — Խանիխեղա — մեր գլուղն ե... հարլուր քսան ծուխ...»

— Եսպես... իսկ յես Վորոբլովկայից եմ, այ ես սարի յետեր։ Գուցե լսել ես։

— Վորոբյովկալից: Զե, չեմ լսել, հեռանւ լե, յերևի...

— Հեռանւ լե:

— Բա մեզ մոտ ինչի՞ համար ես լեկել:

— Են, վոնց ասենք... Դա, ախալեր ջան, յերկար պատմություն ե... Զի լեռ ուզում առնել ձեզնից: Զիեր, ասում են, շատ կա եստեղ, ձեզ մոտ... Յես, ախալեր ջան, նրանց սիրում եմ, ձիերին,— խորածանկ ասաց Մետելիցան, — ինքս ամբողջ կյանքումս ձի լեռ պահել, միայն ուրիշներինը...

— Բա լես, կարծում ես, իմնենքն եմ պահում: Տեր ունեն...

Տղան դուրս հանեց թեքից նիհար կեղտոտ թաթիկը և մտրակի կոթով սկսեց քանդել մոխիրը, վորի միջից թեթևորեն գլորվեցին հրապուրիչ սև կարտոֆիլները:

— Գուցե դու հաց ես ուզում, — հարցրեց նա: — Յես ունեմ, միայն քիչ ե...

— Շնորհակալ եմ, լես հենց նոր լափեցի, այ, մինչև եստեղս, — ասաց Մետելիցան, ցուց տալով մինչև կոկորդը:

Տղան փխրեց կարտոֆիլը, փշեց վրան, կեսն իր կլեպով միասին կոխեց բերանը, շուռ ու մուռ տվեց լեզվի վրա ու ախորժակով սկսեց ծամել: Ծամել վերջացնելուց հետո նա նայեց Մետելիցալին ու ասաց՝

— Վորք եմ լես, կես տարի լե, վոր վորք եօ: Կազակներն ապիիս սըպանին, մորս ել սըպանին, լեզրորս ել...

— Կազակները, — զգաստացավ Մետելիցան:

— Բա ել ով: Սըպանին, վոնց վոր իրենց քեֆն եր: Տուն ու տեղն ել դիմ կրակեցին, դե մենակ մերը չե, տաս տասներկու մարդու, հենց հիմա լել ամեն ամիս քշում գալիո են, այ, ես ըոպելիս մի քառասուն մարդ կան: Շըջանալին գյուղն ել մեր լետեն ե, Ռակիտնոյն, դե ենտեղ վոր ամբողջ ամառը մի գունդ ե կանգնած: Վայ, դու վոր տեսնես, ինչ են անում, գել են, գել... կարտով վերցրու...

— Բա վոնց եր, վոր դուք չփախաք... Տես, հալա, ինչպիսի անտառ ունեք... Մետելիցան նույնիսկ տեղից վեր բարձրացավ:

— Դե ինչ անենք, վոր անտառ կա: Հավիտյան անտառում հո չես նստի: Ասենք ենտեղ ամբողջը ճահիճ ե — դուրս գալու ճար չկա — դժողով ե իսկական...

— Գիտես ինչ, — ասաց Մետելիցան վեր կենալով, — արածեցրու իմ ձիուն, լես մի գյուղ գնամ: Զեզ մոտ, լես տեսնում եմ, չե թե գնել, այլ վերջին ունեցածդ ել կլլեն...

— Բա ընչի՞ եղանակ շուտ: Նստիր... — ասաց հովիվ տղան, հանկարծ վշտանալով, և նույնպես վեր կացավ: — Մենակ զահլաս գնում ե եստեղ, — բացատրեց նա խըզճուկ ձայնով, նայելով Մետելիցալին խոշոր աղաչական ու խոնավ աչքերով:

— Զե, ախալեր ջան: — Մետելիցան ձեռքերը տարածեց: — Իսկը հետախուզելու ժամանակն ե, քանի մութ ե... Ասենք լես շուտ կդառնամ, իսկ հովատակի վոտքերը կկապենք: Վորտեղ ե լինում դրանց ամենից մեծը:

Տղան բացատրեց, թե վոնց պիտի նա գտնի տերտերի տունը, վորտեղ նստած ե հեծելավաշտի պետը, և թե ինչպես նա հեշտությամբ կարող ե ճամփա գտնել աների լետեկի կողմից:

— Իսկ ձեզ մոտ շներ շատ կան:

— Կան, քիչ չեն, համա նրանք չար չեն:

Մետելիցան, հովատակի վոտքերը կապելով ու մնաս բարով ասելով, ճանապարհ ընկավ գետի կողքով ձգվող կածանով: Տղան տխուր նայում եր նրա լետեկից, մինչև վոր նա անհայտացավ խավարի մեջ:



2

Կես ժամ անցած Մետելիցան արդեն բոլորովին մոռեցել եր գլուղին։ Կածանը թեքվեց դեպի աջ, բայց նա շարունակեց գնալ հնձված մարդագետնով, մինչև վոր հասավ գլուղացոց բանջարանոցներին։

Գլուղն արդեն քնած եր։ Կրակները հանգել ելին։ Հազիվ յերեսում ելին աստղերի լույսի տակ խրճիթների տաքուկ կառուները։

Մետելիցան, անցնելով յերկու նրբանցք, թեքվեց դեպի յերրորդը։ Շներն ուղեկցում ելին նրան անվտան խռալու հաջոցով, կարծես ինքներն ել վախենում ելին, բայց վոչ վոք դուրս չեկավ փողոց, չկանչեց նրան։

Մետելիցան անցավ ելի մի քանի փողոց, պառևա գործելով յեկեղեցու մուտ և, վերջապես, դեմ առավ տերտի այգու ներկված ցանկապատին։ Մետելիցան խռարկեց աչքերով, ականջ դրեց և, չնկատելով վոչ մի կասկածելի բան, անձան և արագ թռավ ցանկապատի վրայով։

Ալգին խիտ եր ու սաղարթախիտ, բայց տերեներն արդեն թափվել ելին։ Մետելիցան դրեթե առանց շնչելու սողոսկում եր այցու խորքը։ Թփերը հանկարծ վերջացան և իր ձախ կողմում տեսավ մի լուսավորված լուսամուտ։ Նա բաց եր։ Այստեղ նստած ելին մարդիկ։ Միապաղաղ, փափուկ լուսը շողում եր թափված տերեներին և խնձորենիները կանգնած ելին այդ լուսի մեջ կարծես վոսկուց շինված լինելին...

Մարդիկ թուղթ ելին խաղում սեղանի կողքին, սենյակի խորքում։ Աջ կողմում նստած եր փոքրիկ ծերտերն իր հարթ սանրած մազերով։ Նա ճարպիկ շարժում եր իր նիհար, փոքրիկ ձեռքերը սեղանի վրա, անձայն խառնելով խաղաթղթերն իր խաղալիքային մատներով։ Դեմքը դեպի Մետելիցան արած նստել եր լիքը մարմնով մի գեղեցիկ սպա, չիբուխը բերնին։ Մետելիցան յենթաղըց, վոր դա հեծելավաշոի պետն ե։ Զախից նստած եր սև փափախով ու յափնջով մի սպա՝ առանց ուսադիրների։ Նա ամեն անդամ, յերբ գցում եր խաղաթուղթը, փաթաթվում եր յափնջու մեջ։

Մետելիցան, կոանալով ու յետյետ գնալով դեպի կողք, հեռացավ լուսամուտից։ Նա հենց նոր եր թեքվել դեպի ծառուղին, յերբ հանկարծ դեմ առ դեմ հանդիպեց մեկին, վորի մի ուսին կազակի վերարկու յեր գըշված։ Նրա յետեսում յերնում ելին ելի յերկու հոգի։

— Դու եստեղ ինչ ես իանում, — զարմացած հարցը եց ալդ մարդը, պահելով վերարկուն, վորը քիչ մնաց վալրընկներ, յերբ նա դեմ առավ Մետելիցային։

Մետելիցան թռավ մի կողմ ու նետվեց թփերի մեջ։

— Կանգնիր, բռնիր դըան, բռնիր... Եստեղ յեկեք, ել... բղավեցին մի քանի ձախներ։ Սուր, կարճ կրակոցները ճարճատեցին փախչողի յետեկից։

Մետելիցան, խճճվելով թփերի մեջ ու կորցնելով գլխարկը, ըստ բախտի առաջ եր նետվաւմ, բայց ձախները տնքում ելին, վոռնում արդեն ինչ վոր տեղ առջեցում, և չար շների հաջոցը լսվում եր փողոցի կողմից։

— Ալ, հրես, բռնիր, — բղավեց մեկը, նետվելով դե-
պի Մետելիցան, ձեռքերը վեր բարձրացրած:

Գնդակը վզզաց ուղիղ ականջի մոտով:
Մետելիցան նույնպես կրակեց: Դեպի իրեն վազող
մարդը գալթեց ու վալը ընկավ:

— Կերար, հա, չես բռնի... — հանդիսավոր ասաց
Մետելիցան, վորը մինչև վերջին ըռպեն իսկապես չեր
հավատում, վոր իրեն կարող են շրջապատել:

Բայց մի ինչ վոր խոշոր ու ծանր մարդ ընկավ նրա
վրա յետևից ու տակով արեց: Մետելիցան փորձեց ազա-
տել ձեռքը, բայց գլխին իջած ահեղ հարվածը անզգա-
լացրեց նրան...

Հետո նրան ծեծում ելին անընդհատ և, նույն իսկ
ուշքը կորցնելուց հետո ել նա նորից ու նորից զգում
եր վրա ալդ հարվածները...



3

Դաշտավայրում, վորտեղ քնած եր կեխսոնի ջոկատը,
բավական մութ եր ու խոնավ, բայց Խառնիխիձախից
այն կողմ գտնվող նարնջագույն բացատից նայեց արևը
և որը դանդաղ բացվեց տայգավի վրա:

Զիերի մոտ կկզած որապահը լսեց քնի մեջ մի հա-
մառ հնչյուն, վոր նման եր գնդացը հեռավոր կոտորա-
կի, և վախեցած վեր ցատկեց հրացանը ձեռքին: Բայց
դա թխթխացնում եր փալտփորը հին լաստենու վրա,
գետի մոտ:

Որապահը հայնոյեց և ցրտից կծկելով ու փաթաթ-
վելով քրքրված շինելի մեջ, գուրս յեկավ բացատ:

Իսկ Մետելիցան դեռ չկա... Լավ լափել ե, յերմի,
ու մրափում ե մի վորեւ խրճիթում, իսկ եստեղ դե-
արի, ու սոված նստիր, — մտածեց որապահը:

Նա սիրու չարեց անհանգստացնել կեխսոնին ու
արթնացը նրա ոգնական Բակլանովին:

— Հը՛, չի յեկել դեռ, — արագ շարժվեց տեղից Բակ-

լանովը, չոելով քնաթաթախ աչքերն առանց բան հասկանալու: — Վինց թե չի լեկել: Չե, ախպեր ջան, եղ քաները դու թող, եղպես բան չի կարող լինել... հա, եղպես: Դե, արթնացը լինսոնին:

Նա թուավ տեղից, քնաթաթախ, հոնքերը հավաքելով քթի վերեր, և արագ շարժումով պնդացըց գոտին:

Լինսոնը փորքան վոր պինդ եր քնել, իսկույն և յեթ բացեց աչքերն ու նստեց: Նայելով որապահին ու Բակլանովին, նա հասկացավ, վոր Մետելիցան չի լեկել, և վոր վաղուց արդեն ժամանակն է ճամփա ընկնելու: Նույն բովելին նա ընկել եր չոքերի վրա ու, փաթաթելով շինելը, պատասխանում եր Բակլանովի տագնապալի հարցումներին:

— Դե, եղտեղ ինչ կա վոր: Յես եղպես ել կարծում ելի... Իհարկե մենք նրան կհանդիպենք ճանապարհին:

— Իսկ յեթե չհանդիպենք:

— Յեթե չհանդիպենք... Լսիր, դու ոլահեստի լերիդ չունելի փաթեթի համար:

— Վեր կաց, վեր, ձի՛ւկ: Դեպի գյուղ, — բղավում եր որապահը, վոտքերով հրնդելով քնածներին:

Խոտի միջից վեր ելին բարձրանում գզգզված պարտիզանական գլուխները:

Այն միտքը, վոր Մետելիցան կարող եր ընկնել թշնամու ձեռքը, դժվարությամբ եր պատվաստվում մարդկանց: Ամեն մի պարտիզան համառորեն ու վախվիմելով աշխատում եր հեռացնել այդ միտքն իրենից: Ընդհակառակը, որապահի յենթադրությունը, թե դասակապետը «կուշտ լավել ու մրափում ե վորեն խրճիթում», չնայած դա նման չեր արագաշարժ ու ճշտապահ Մետելիցային, ավելի ու ավելի կողմնակիցներ եր գրավում: Շատերը բացարձակ տրտնջում ելին Մետելիցայի «սրիկալության ու անդիտակցության» համար և ճանձրացնում ելին Լեվինսոնին, պահանջելով անմիջապես դուրս գալ նրան հանդիպելու: Յեվ յերբ Լինսոնը տվեց, վերջապես,

դուրս գալու հրամանը, ջոկատում ալսպիսի հրձվանք առաջցագավ, կարծես թե այդ հրամանով իսկապես վերջանում ելին բոլոր փորձանքներն ու տանջանքները:

Նրանք գնում ելին մի ժամ, յերկու, իսկ դասակապետն իր քաջարի ու ձյութերանգ մազափունջով դեռ չեր յերեսում կածանի վրա:

Նրանք կարեցին նորից ալդքան ճանապարհ և ելի ալդքան, իսկ Մետելիցան դեռ չկա:

Տալգալի յեզրին ջոկատը մոտենում եր խոժոռ լուսամբ:





4

Մետելիցան ուշքի յեկավ մի մեծ սութ սարալում։ Նա պառկած եր մերկ խոնավ գետնին։ Նա անմիջապես հիշեց այն ամենը, վոր պատահել եր իր հետ։ Հարվածները, վոր կը ել եր նա, դեռ աղմկում ելին գլխում, մազերը չորացել ելին արյան մեջ, — նա զգում եր այդ չորացած արյունը ճակատի և այտերի վրա։

Առաջին միտքը, վոր նա արեց, դա այն եր, թե չի կարելի արդիոք փախչել։ Նա պրատեց ամբողջ սարալը, շոշափեց բոլոր ծակուծուկերը, փորձեց նույնիսկ ջարդել գուռը։ Նա ամեն տեղ հանդիպում եր սառը փարտի, իսկ ճեղքերն այնքան փոքր ելին, վոր նըանք դժվարությամբ ելին բաց թողնում աշնանալին առավոտվա աղոտ լուսաբացը։

Մետելիցան դեռ չեր վերջացրել սարալի գննությունը, յերբ դուն լեռնում լսվից աղմուկ, ճռճռաց դռնակը և գորշ, առավոտվա լուսի հետ միասին սարալը

մտան յերկու զինված լամպասավոր կաղակներ։ Մետելիցան, վոտքերը չուած, աչքերը կկոցած նայում եր նրանց։ Նկատելով նրան, նրանք անվճռականորեն մի փոքր հապաղեցին դուն մոտ։ Յետեռում կանգնածը անհանգիստ վեր քաշեց քիթը։

— Գնանք, հայրենակից, — սսաց վերջապես, առջևինը։

Մետելիցան, համառությամբ գլուխը կախած, դուրս յեկավ շենքից։

Վորոշ ժամանակից հետո նա կանգնած եր իրեն ծանոթ մարդու առաջ — սկ փափախով ու լափնջով — հենց նույն սենյակում, վորի ներսը նա դիտում եր գիշերը տերտերի այգուց։ Այդտեղ բազկաթուում ձգված, նստած եր զեղեցիկ, լիքը սպան, վորին Մետելիցան յերեկ հեծելավաշտի պետի տեղն եր դրել։ Նա զարմացած, վոչ այնքան խիստ նայում եր Մետելիցալին։ Հիմա, դիտերով յերկախն, նա հասկացավ, վոր պետը վոչ թե հենց այդ լիքը սպան եր, այլ մյուս լափնջովը։

— Կարող եք զնալ, — ընդհատ սսաց այդ մյուսը, նայելով կազակներին, վորոնք կանգ ելին առել դուն մոտ։

Նըանք, անշնորհք բոթելով իրար, դուրս յեկան սենյակից։

— Դու ի՞նչ ելիր անում յերեկ այգում, — արագ հարցըց պետը, կանգ առնելով Մետելիցալի առաջ և նայելով նրան իր հատու, անթարթ հայացքով։

Մետելիցան լուս, ծաղրաբար հառեց նըա վրա իր հայացքը, դիմանալով նըա հայացքին, հազիվ շարժելով իր ատլաս սկ հոնքերը և իր ամբողջ տեսքով ցուց տալով, վոր նա վոչինչ չի ասելու։

— Դու թող եդ հիմարությունները, — նորից սսաց պետը, բոլորովին չբարկանալով ու չբարձրացնելով ձայնը։

— Ե՛, ի՞նչ խոսենք իզուր, — ներողամտաբար Ժըպտաց դասակապետը։

Հեծելավաշտի պետը մի քանի վարկան ուսումնա-

սիրում եր նրա անզգա չեշտ դեմքը, վոր ծածկված եր
չորացած արյունով:

— Ինչ ե, դու եստեղացի լես, թե ուրիշ տեղից ես
լեկել:

— Թող, ձերդ բարեծննդություն, — վճռականորեն
ասաց Մետելիցան, սեղմելով բռունցքներն ու հաղիվ
զսպելով իրեն, վորպեսզի չհարձակվի նրա վրա:

— Ո՞ն, — առաջին անգամ զարմացած ու բարձր
բացականչեց յափնջով մարդը: Նա հանեց պատյանից
ատրճանակն ու թափ տվեց այն Մետելիցայի քթի առաջ:
Դասակապետը, շուռ գալով դեպի լուսամուտը, քարացավ
իր լոռության մէջ:

Դրանից հետո, վորքան վոր սպառնում ելին նրան
ատրճանակով, վորքան վոր համոզում ելին ճշմարտորեն
պատմել ամեն ինչ, խոստանալով ազատել իրեն, նա չար-
տասանեց վոչ մի խոսք, նույն իսկ վոչ մի անգամ չնա-
յց հարցնողներին:

Հարցաքննության ամենալեռուն պահին դուռը թե-
թևակի բացվեց և ինչ վոր մեկի մազոտ գլուխը, իր խո-
շոր վախեցած ու հիմար աչքերով, ներս նայեց սենյակ:

— Հը, — ասաց հեծելավաշտի պետը, — հավաքվել են
արդեն: Ասա տղերքին, վոր վերցնեն եդ իդիթին:

Նույն յերկու կազակները հանեցին Մետելիցային
բակը և, ցուց տալով նրան բաց դռնակը, գնացին նրա
լետնից: Մետելիցան յետ չեր նալում, բայց զդում եր,
վոր յերկու սպաները նույնպես գալիս են լետնից: Նրանք
դուրս յեկան յեկեղեցու հրապարակը: Այնտեղ, փայտա-
շեն խրճիթի մոտ, հավաքվել եր ձիավոր կազակներով
շրջապատված ժողովուրդը:

Մետելիցան բարձրացրեց զլուխն ու դիտեց այդ
յերերուն, խալտաբետ, անձայն ամբոխը, վորը կազմ-
ված եր զեղջուկներից, տղաներից, տաք կոֆտաներով
գեղջկուհիներից, գունավոր թաշկինակներով աղջկեր-
քից, մազափնջափոր ժիր ձիավորներից, վորոնք այնպես
դույնզգուրդն, ձգված ու մաքուր ելին, կարծես գոեհկա-

ճաշակ պատկերներից վերցված լինելին: Նա անցավ ամ-
բոխի միջով ու կանգ առավ խրճիթի մոտ: Սպաները,
առաջ անցնելով, բարձրացան պատշգամբ:

— Եստեղ արի, եստեղ, — ասաց հեծելավաշտի պետը,
տեղ ցուց տալով նրան իր կողքին:

Մետելիցան միանգամից անցավ աստիճանների վրա-
լով ու կանգնեց նրա կողքին:

Հիմա նա լավ յերևում եր բոլորին, — ձիգ ու բարե-
կազմ, սեամազ, յեղերպի վափուկ մորթից կարված
կոշիկներով, ոձիքն արձակած շապկով, վոր գոտենորված
եր ֆուֆայկայի տակից դուրս թողած, խիտ կանաչ փըն-
ջավոր ժապավենով:

— Ո՞վ ե ճանաչում ես մարդուն, — հարցրեց պետը,
դիտելով բոլորին սուր ծակող հալացքով, վոր մի վար-
կան կանգ եր առնում մերթ մեկի, մերթ մյուսի դեմքի
վրա:

Յեկ յուրաքանչյուրը, վորի վրա կանգ եր առնում
այդ հայացքը, շփոթվելով ու աչքերը թարթելով, կախում
եր գլուխը:

— Վոչ վոք չի ճանաչում, — կրկնեց հարցը պետը: —
Մենք այդ կպարզենք հիմա... Նեշխապո, — բղավեց նա,
ձեռքը շարժելով դեպի այն կողմ, վորտեղ բաց շագանա-
կագույն ձիու վրա նստած եր կազակի յերկար շինել հա-
գած մի սպա:

Ամբոխը խուլտաբուրերվեց: Առջեռում կանգնածները
յետ նայեցին, — սև ժիլետով մեկը հրճրելով անցնում եր
ամբոխի միջով, կուացնելով զլուխն այնպես, վոր յերևում
եր միայն նրա տաքուկ, մորթե փափախը:

— Ճանապարհ տվեք, ճանապարհ տվեք, — ասում եր
նա շտապշտապ, ճանապարհ բաց անելով մի ձեռքով և
մյուս ձեռքով ինչ վոր մեկին քաշ տալով իր յետնից:

Վերջապես նա հասավ ուղիղ պատշգամբին և բոլորը
տեսան, վոր նա բերելում ե մի յերկար պիջակով՝ նի-
հարիկ սեագլուխ տղալի, վորը վախվիսելով ընդգիմանում
եր ու, սև չքերը լայն բաց արած, նայում եր մեկ Մետելի-

ցալին, մեկ հեծելավաշտի պետին։ Ամբոխն իրար անցավ, ավելի բարձը լսվեցին ախուվախն ու զսպված կանացի խոսսակցությունը։ Մետելիցան նաև ներքեւ ու հանկարծ գլխի ընկավ, վոր սևագլուխ տղան նույն հովիվն ե, վորին նայերեկ հանձնել եր իր ձին։

Գյուղացին, վոր բռնել եր նրա ձեռքից, վերցրեց գլխարկն ու դլուխ տալով պետին, սկսեց՝

— Այ եստեղ ես իմ հովիվ տղան…

Բայց յերեխ վախենալով, վոր իրեն չեն լսի, նակուցավ գեղի տղան և, մատով ցուց տալով Մետելիցամին, հարցրեց՝

— Սա ե, չե։

Մի քանի վարկան շարունակ հովիվ տղան ու Մետելիցան նայում ելին իրար աչքերի մեջ։ Հետո տղան հայացքը փոխադրեց հեծելավաշտի պետի վրա, հետո գյուղացու, վոր բռնել եր նրա ձեռքից, խորը ախ քաշեց ու բացասաբար թափ տվեց գլուխը…

Ամբոխը, վորն այնքան եր սսկվել, վոր լսվում եր, թե ինչպես ե զարկվում հորթը յերեցփոխի քողափիկում, հազիվ տարուբերվեց ու նորից անշարժացավ։

— Դե մի վախի, հիմար տղա, մի վախի, — վաղաքշական գողոցով համոզում եր գյուղացին, արագ ցցելով մատը գեղի Մետելիցան։ — Բա ել ով կլնի, թե վոր նաչի։ Դե ճանաչիր ելի, ճանաչիր… Ը-ը-հ, հձ..— չարացած կտրեց նա հանկարծ ու ամբողջ ուժով ձգեց տղալի թերից։ — Դե, նա յե, ձերդ բարեծննդություն, բա ել ով կարող ե լինել։ Են ե, վոր գաղտեն վախենում ե, բա ել ով կլնի, քանի վոր ձին թամբած ձի յե, ատրճանակի բունն ել պայուսակի մեջ… Իրիկունը կրակի լուսին յեկել մոտեցել ե։ «Արածեցրու, — ասում ե, — իմ ձին, իսկ ինքը իջնում ե գյուղը, իսկ տղան չի սպասել, — վոր լուսացել ե, — ել չի սպասել, ու բերել ե ձին, ձին ել թամբած ձի, ատրճանակի բունն ել պայուսակի մեջ… ել ով պտի ըլնի վոր…»

— Ո՞վ ե յեկել, պատահել, ինչ ատրճանակի բուն, — հարցրեց պետը։

Գյուղացին ավելի շփոթված ճմուց ձեռքում գդակն ու, բառերը կիսատ թողնելով, խառնելով իրար, պատմեց այն մասին, թե ինչպես իր հովիվը բերել եր առավոտյան ուրիշի ձին, թամբած ու ատրճանակի բունն ել պայուսակի մեջ։

— Ահա, թե ինչ, — ձիգ տվեց հեծելավաշտի պետը։ — Բայց դե նա չճանաչեց, չե, — ասաց նա գլխով անելով տղայի կողմը։ — Ասենք, եստեղ տուր նրան — մենք նրան մեր իմացած ձևով կհարցաքննենք։

Տղան, վորին հրում ելին լետեկից, մոտեցավ պատըշդամբին, սիրու չանելով, սակայն, բարձրանալ վերև։ Սպան ցած վազեց աստիճաններից, բռնեց նրա նիհար, ցնցվող ուսերից ու, քաշելով գեղի իրեն, հառեց իր ծակող ու սարսափելի հայացքը նրա սարսափից կլորացած աչքերին։

— Ը-ը-ը՝ — հանկարծ աղաղակեց տղան շուռ տալով աչքերի սպիտակուցը։

— Վայ, եղ վոնց պիտի ըլնի, — ախ քաշեց, չդիմանալով, գեղջկուհիներից մեկը։

Նույն ակնթարթ ինչ վոր մեկի սրբնթաց ու ձկուն մարմինը պատշգամբից ցած նետվեց։ Ամբոխն ուժգին տատանվեց, թափահարելով բազմաձեռք մարմինը — հեծելավաշտի պետն ընկավ ուժգին հարվածի հետեանքով…

— Կրակեցեք նրա վրա… Ախըր, ես վոնց բան ե, — բղավեց գեղեցիկ սպան, անողնական պարզելով ափը, մոռանալով, ինչպես յերեւում ե, վոր ինքն ել գիտե կը-րակել։

Մի քանի ձիավորներ նետվեցին ամբոխի մեջ, իրենց ձիերով գես ու գեն շպրտելով մարդկանց։ Մետելիցան, ամբողջ մարմնով ընկնելով թշնամու վրա, աշխատում եր բռնել նրա կոկորդից, բայց նա գալարվում եր, յափնջին սև թերի նման փուած իր շուրջը, և ջաձագորեն

կառչում եր ձեռքով գոտուն, աշխատելով գուրս քաշել
ատրճանակը: Վերջապես նրան հաջողվեց բացել պատրա-
նը, և հենց նույն ակնթարթում, յերբ Մետելիցան բռնեց
նրա կոկորդից, նա մի քանիսն իրար յետից կրակեց
նրա վրա:

Յերբ վրա հասած կազակները քաշ ելին տալիս Մե-
տելիցային վոտքերից բռնած, նա .դեռ կառչում եր խո-
տից, աշխատելով բարձրացնել գլուխը, բայց նա անզոր
ընկնում եր ցած ու քաշկոտվում գետնի վրայով:

— Նեչիտայլո, — բղավում եր գեղեցիկ սպան. — հա-
վաքել հեծելավաշտը... Դուք ել կգաք, — հարցրեց նա
պետից: — Զի տվեք հրամանատարին:

Կես ժամ հետո կազակների հեծելավաշտը լրիվ սպա-
ռազինված դուրս յեկավ գյուղից ու սլացավ դեպի վեր,
նույն ճանապարհով, վորով անցյալ գիշեր յեկել եր Մե-
տելիցան:



5

Բակլանովը, վոր մյուսների հետ միասին չափազանց
անհանգուացած եր վերջապես, չդիմացավ:

— Լսիր, թող յես առաջ անցնեմ, — ասաց նա լին-
սոնին. — ախըր սատանան գիտե, իսկապես:

Նա լսթանեց ձիուն ու նույնիսկ ավելի շուտ քան
յենթագրում եր, դուրս յեկավ անտառի յեզրը, կանաչ
խոտով պատած մեղվի ձմեռոցի մոտ: Նա կարիք չունե-
ցավ, սակայն, բարձրանալ կտորը. — վոչ հեռու քան մի
կես վերստի վրա իջնում ելին բլրի վրայից հիսունի
չափ ձիավոր մարդիկ:

Բակլանովը կանգ առավ, թագնվելով թիկերի մեջ,
ցանկանալով ստուգեր, չեն յերևա արդյոք բլրի յետելից
նոր ջոկատներ: Վոչ վոք չերևաց այլևս: Հեծելավաշտը
գալիս եր քալով, անկարգ շարքերով: Մարդկանց անկա-
րգալիս եր քալով, անկարգ շարքերով: Մարդկանց անկա-
րգալիս եր քալով, անկարգ շարքերով: Մարդկանց անկա-

րգալուց յերեսում եր, վոր հեծելավաշտը մի քիչ առաջ

գարգով եր գալիս:

Բակլանովը յետ դարձրեց ձիու գլուխն ու քիչ եր

Թմում դիալչեր ուղղակի Լեխնսոնին, վորն ամրեն դուրս
եր՝ գալիս անտառի լեզրը։ Նա նշան արեց կանգ առնելու։
— Շատ են, և հարցրեց Լեխնսոնը, լսելով նրան։
— Մոտ հիսուն հոգի։
— Հետեվակակ ե։
— Չե, ձիավորներ են...
— Կուբրակի, Դուքով, իջեք ձիերից, — կամաց հրամա-
ցեց Լեխնսոնը։ Կուբրակը — աջ թեր, Դուքովը — ձախ...
Հանձնելով Բակլանովին Մետելիցայի դասակի հրա-
մանատարությունը ու կարգադրելով նրան մնալ այստեղ,
նա ինքն իջավ ձիուց ու գնաց շղթայի առջեկից, հաղիվ
կաղկղալով ու թափահարելով մառզերը։ Առանց թվերից
դուրս գալու, նա պառկեցրեց շղթան, իսկ ինքը պարտի-
գաններից մեկի ուղեկցությամբ հասավ մեղվի ձմեռոցին։

Հեծելավաշուը բոլորովին մոտ եր։ Դեղին բոլորքնե-
րից ու լամպասներից Լեխնսոնը ճանաչեց, վոր դրանք
կազակներ են։ Նա լավ նշմարեց նաև սկ լավնջով հրա-
մանատարին։

— Ասա, թող ես կողմ սողան, — վասփաց նա պար-
տիզանին, թե չե... Եե, ի՞նչ ես նայում, շնւտ... — Յեվ
նա, հոնքերը կիտած, բոթեց նրան։


Հեծելավաշուն արդեն այնքան մոտիկ եր, վոր լըս-
վում եր ձիերի դոփիունն ու ձիավորների գսպված խո-
սակցությունը, կարելի էր նշմարել նույնիսկ առանձին
դեմքեր։

Լեխնսոնը տեսնում եր այդ դեմքերի արտահայտու-
թյունները, առանձնապես մի գեղեցիկ, լիքը սպազի, վորը
հենց նոր առաջ եր անցել չիբուխը բերնին և շատ վատ
պահում եր իրեն թամբի վրա։

— Դասա-ա-ակ... — բղավեց հանկարծ Լեխնսոնը բա-
րակ, լերկարաձիգ ձայնով։ — Կրակ...

Գեղեցիկ սպան, լսելով նրա ձայնի առաջին հնչյուն-
ները, զարմացած բարձրացրեց գլուխը։

Բայց նույն վարկանին գլխարկը թռավ նրա գլխից



ու նրա դեմքն ընդունեց չափազանց վախեցած ու ան-
զոր արտահայտություն:

— Կրակ... — նորից բղավեց Լեինսոնն ու կրակեց
ինքը, աշխատելով խփել գեղեցիկ սպալին:

Հեծելավաշտը խառնվեց: Շատերը, նույն թվում և
գեղեցիկ սպան, վայր ընկան գետին: Մի քանի վայրկան
շարունակ շփոթված մարդիկ ու ձիերը, վորոնք ծառս
ելին լինում, զարկվում ելին նույն տեղում, և ինչ վոր
մի բան բղավում, վոր չեր լսվում կրակոցների ձայնից:
Հետո այդ խառնաշփոթությունից դուրս թռավ մի առան-
ձին ձիավոր, սև փափախով ու լավնջով, սկսեց վեր-
վեր թռչել հեծելավաշտի առաջ, աշխատելով գսպել ձիուն,
ու թափահարելով թուրը: Մնացածները, ինչպես յերեսում
եր, լավ չելին հնազանդվում նրան — մի քանիսն արդեն
սլանում ելին հեռու, ժարակելով ձիերին: Ամբողջ հե-
ծելավաշտը նետվեց նրանց լետերից:

Պարտիզանները տեղերից վեր թռան, իսկ ամենից
տաքարյունները վագեցին նրանց լետերից, կրակելով ճա-
նապարհին:

— Զի՞ նստեք, — բղավում եր Լեինսոնը: — Բակլանով,
եստեղ արի... Շուտ ձի՞ նստեք...

Բակլանովս անցավ մոտից, փալլարի պես փալլող
թռւրը ձեռքին յետ տարած գեպի ներքեւ: Նրա յետերից,
գնդացնելով ու հարալ հրոցով սլանում եր Մետելիցայի
դասակը...

Յերբ կռիվը վերջացել եր ու կազակների հեծելա-
վաշտը, կորցնելով մարդիկ ու ձիեր, անհայտացավ կեչսւ
պուրակում, պարտիզանները գտան իրենց հետախուզին:
Կազակները գցել ելին նրան ցանկապատի տակ, մեծ խըր-
ճթի յետեռում գտնվող փողոցում: Մետելիցան պառկած
եր կողքի վրա, ու նրա մազերը խառնվել ելին աշնա-
նալին թռշնած խոտին:

Ամենից առաջ գյուղ մտավ Մետելիցայի դասակը:
Մարդիկ իջան ձիերից, խիտ շարքերով շրջապատեցին

իրենց հրամանատարի մարմինը, իսկ Բակլանովը չոքելով
գետնին, զգուշորեն բարձրացրեց գետնից դասակապետի
սևամագ գլուխը:

— Եը, վճնց ե, — հարցրեց մոտենալով Լեինսոնը:

— Զի՞ շնչում... — կոմաց պատասխանեց Բակլանովը
առանց գետնից բարձրանալու:

Այդ ժամանակ պարտիզանների խմբի մեջ յերեաց
հովիվ տղան: Նա անցնում եր շարքերի միջով, քաշելով
իր լետերից Մետելիցայի ձիուն:

Մարդիկ ճանապարհ տվին, ու նրանք առաջ անցան:

— Այ, հրես, նրա ձին, — ասաց տղան, — պահիր, ա-
սաց... ինքն ել ալես չեկավ... Զեր ձին ե, վերցրեք...

Պատ. խմբագիր՝ Ե. Զովուրյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Խուդավերդյան
Մրգագրիչ՝ Ռ. Նեանյան

Գլանվածքը լիազոր Ա—1184 Հրամ. 3880
Պատվեր 1137, սիրած 3000
Գեղեցիկ տպարան, Յերեվան, Ա Գևորգյանցի, 4

ՀՀ Ազգային գրադարան



NL0395423

5669